ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

N _____

<<_____>> _____20 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության Կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» Համաձայնագրում՝ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին

Համաձայնագրում առկա է դրույթ (18-րդ հոդված՝ կողմերի միջև ծագած վեճերի լուծման հետ կապված (դատական) ծախսեր), որը համապատասխան պայմանների ի հայտ գալու դեպքում կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորությունների առաջացման, այդ թվում՝ ծախսերի ավելացմանը, որի չափը հնարավոր չէ գնահատել համապատասխան տվյալների բացակայության պատճառով:

Միաժամանակ «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Համաձայնագրին առնչվող պարտավորություններ նախատեսված չեն:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ եթե կողմերի միջև չի գործում ավիաընկերությունների հարկային համակարգը կարգավորող՝ կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագիր, ապա յուրաքանչյուր կողմ, փոխադարձության հիմունքով, մյուս կողմի ավիաընկերություններին պետք է ազատի բոլոր տեսակի օդային հաղորդակցությունների շահագործումից ստացված շահույթներից և հասույթներից գանձվող հարկերից և վճարներից՝ առանց սահմանափակելու յուրաքանչյուր կողմի սահմանած օրենսդրական պարտավորությունների կատարումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության միջև չի գործում ավիաընկերությունների հարկային համակարգը կարգավորող՝ կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագիր՝ հայտնում ենք, որ Համաձայնագրի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների նվազեցման:

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ